



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝
կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում**

Դաստիարակ՝ Կարինե Սոսիկի Եգանյան

Մանկապարտեզ՝ «51» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	5
ԳԼՈՒԽ 2. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ	
2.1 Ինտեգրված պարապմունք: Հետազոտական աշխատանքի նպատակը, խնդիրները, ընթացքը.....	8
2.2 Հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծություն.....	14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	15
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից կրթությունը դիմում է ուսուցման նոր, ոչ ավանդական ձևերի, դասավանդման մեթոդների, ձևավորում է ինտեգրված ուսուցման հիմքերը: «Ինտեգրում» (Integr-ամբողջ)- լատիներենից թարգմանաբար նշանակում է վերականգնում, համալրում, մասերի միավորում մեկ ամբողջի մեջ՝ ոչ թե մեխանիկորեն, այլ փոխադարձ ներթափանցմամբ: Նշանակում է համատեղել գիտելիքները տարբեր կրթական ոլորտներից հավասար հիմունքներով՝ լրացնելով միմյանց:

Ինտեգրված ուսուցումը ժամանակակից մեթոդիկայի նորություններից մեկն է: Այս հասկացությունը մանկավարժության մեջ մտել է 80-ական թվականներին և նշանակում է միջառարկայական կապերի բարձրագույն ձև:

Ինտեգրման սկզբունքը ենթադրում է ուսուցման գործընթացի բոլոր բաղադրիչների համակարգի բոլոր տարրերի փոխկապակցում և համակարգերի միջև կապ: Այն առաջատար է առաջադիմության զարգացման մեջ, որոշելով դասընթացի բովանդակությունը, ձևերը եւ մեթոդները: Ուսուցման կազմակերպման մեջ ինտեգրումը նկարագրվում է Ս. Մ. Գապենկովի և Գ. Ֆ. Ֆեդորեթսի գրվածքներում: Հետազոտողները ինտեգրումը հասկանում են մանկավարժական գործընթացի զարգացման կարևորագույն բնագավառներից մեկը, որը կապված է անհամեմատելի մասերի միավորման հետ: Այս գործընթացը կարող է տեղի ունենալ ինչպես գոյություն ունեցող համակարգում, այնպես էլ նոր համակարգի շրջանակներում¹:

Ինտեգրումը հնարավորություն է տալիս դաստիարակներին ստեղծագործել, ինքնահաստատվել, ինքնաարտահայտվել և նպաստում է երեխաների ընդունակությունների բացահայտմանը: Ինտեգրման ընթացքում

¹ Пузанкова Е. Н., Бочкова Н. В. Современная педагогическая интеграция, её характеристики/// Образование и общество. — 2009. — N 1. — С. 9-13.

հնարավորություն է ստեղծվում դուրս գալ մեկ ուսումնական առարկայի սահմաններից, ցույց տալ, որ աշխարհում ամեն ինչ կապված է իրար հետ, միևնույն ժամանակ ինտեգրումն ուժեղացնում է տվյալ առարկայի խորացված ուսուցման դրդապատճառները:

Հետազոտության նպատակը: Ինտեգրված պարապմունքի միջոցով ապահովել երեխաների մտավոր, սոցիալական և գեղագիտական համակողմանի և ներդաշնակ զարգացումը:

ԳԼՈՒԽ 1. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մանկության ամեն մի օրը մի նոր բան է հայտնագործում շրջապատող աշխարհում: Ամեն մի նոր հայտնագործություն մարմնավորվում է որպես հեքիաթ, որի ստեղծողները երեխաներն են ... Երեխային պետք է ծանոթացնել յուրաքանչյուր առարկայի մյուս առարկաների հետ կապելով: Երեխաների համար պատուհան բացեք դեպի շրջապատող աշխարհը: Կարողացեք երեխայի համար շրջապատի աշխարհում հայտնագործել որևէ նոր բան, բայց դա կատարե՛ք այնպես, որ կյանքի այդ պատահիկը երեխաներին երևա ծիածանի բոլոր գույ ներով»:

Վ.Սուխոմլինսկի

Ինտեգրացիան մի ուսումնական նյութի մեջ տարբեր առարկաների խորը միաձուլումն է, իհարկե, որքանով դա հնարավոր է: Ինտեգրումը կատարվում է մի քանի ուղղություններով և տարբեր մակարդակներում: Առանձնացվում է միջառարկայական ինտեգրումը, որը ենթադրում է երկու և ավելի առարկաների, հասկացությունների, փաստերի միացություն, որը պետք է կիրառի դաստիարակը ինտեգրված պարապմունքի նախապատրաստման ընթացքում:

Ներառարկայական ինտեգրումն առանձին ուսումնական առարկաների ներսում հասկացությունների ինտեգրումն է, ինչը շատ կարևոր է, քանի որ երեխաներն առարկաներն ընկալում են իրարից անկախ, և մեր խնդիրն է ցույց տալ, որ դա սխալ է, քանի որ բոլոր առարկաները տարբեր կողմերով կապված են իրար հետ:

Վերառարկայական ինտեգրումը հիմնական և լրացուցիչ կրթական նյութերի համադրումն է:

Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են տալիս լուծել մի շարք խնդիրներ, հասնել այնպիսի նպատակների, որոնք դժվար կլինեին իրականացնել ավանդական պարապմունքների միջոցով:

Ներկայացնում ենք այն նպատակները, որոնք առաջադրվում են ինտեգրված պարապմունքների կազմակերպման հիմքում².

- Ճանաչողական - սովորեցնել գտնել կապեր փաստերի, երևույթների, իրողությունների միջև, և անել եզրակացություններ,
- Զարգացնող - զարգացնել վերլուծելու, համեմատելու և ամփոփելու կարողությունը,
- Դաստիարակչական - առաջացնել սեր և հետաքրքրություն ին տեգր ված ուսուցման հանդեպ:

Ինտեգրված պարապմունքներին երեխաները սիրով են աշխատում, հեշտությամբ և հետաքրքրությամբ են յուրացնում ծավալուն նյութը: Կարևոր է նաև այն, որ ձեռք բերված գիտելիքները, կարողություններն ու հմտությունները կիրառվում են երեխաների կողմից ոչ միայն գործնականում՝ ավանդական ուսումնական իրողություններում, այլև հնարավորություն են տալիս բացահայտել նրանց ստեղծագործական հնարավորությունները, նպաստում են մտավոր ունակությունների բացահայտմանը:

Ինտեգրված պարապմունքները երեխային տալիս են բավականին լայն ու վառ պատկերացումներ շրջապատող աշխարհի մասին, ուր նա իրապես ապրում է փոխհարաբերությունների մեջ է երևույթների և առարկաների հետ, կապված է աշխարհում առկա բազմաթիվ նյութական ու գեղարվեստական մշակույթների հետ: Հիմնական շեշտը դրվում է ոչ այնքան որոշակի գիտելիքների յուրացման, որքան ստեղծագործական մտածողության զարգացման վրա: Սա հաստատում է երեխաների հետ գործնական աշխատանքի արդյունավետությունը՝ պարապմունքի տվյալ ձևի կիրառմամբ: Նախադպրցական կրթության հիմնական նպատակն է՝ ապահովել երեխայի մտավոր, սոցիալական, ֆիզիկական, հուզական և գեղագիտական ոլորտների ներդաշնակ և համակողմանի զարգացումը: Եվ այդ

² Ինտեգրված երաժշտական պարապմունքները մանկապարտեզում: Ուսումնամեթոդական ձեռնարկ/ Կազմող Կ. Ղազարյան.- Երևան:Մարի հրատարակչություն, 2023.-192 էջ:

զարգացման ամենատարածված միջոցներից է հատուկ կազմակերպված ուսուցման գործընթացը՝ ինտեգրված պարապմունքը:

Ինտեգրված պարապմունքների հիմնական խնդիրներն են՝

- երեխայի համակողմանի դաստիարակությունը, կոնկրետ առարկաների մասին ամբողջական պատկերացումների ձևավորումը.
- տարբեր հասկացությունների ինտեգրմամբ գործունեության տարբեր ձևերում երեխային ընդգրկելը:

Ինտեգրված պարապմունքներն արդյունավետ են, երբ անցկացվում են խաղային ժամանակակից մեթոդներով: Ըստ Մ. Մոնտեսորիի՝ «Այն խաղը, որն ուսուցանող չէ՝ դատարկ խաղ է»: Երբ երեխան ուսուցանվող նյութը լրացնում է խաղի միջոցով, ապահովվում են բարձր տրամադրություն, հուզական դրական մթնոլորտ և ակտիվություն: Իսկ դրանք այն գործոններն են, որոնք անհրաժեշտ են երեխայի լիարժեք զարգացման համար: Այդ է պատճառը, որ մեր մանկապարտեզում կարևորվում է ինտեգրված պարապմունքների անցկացումը:

«Ինտեգրված պարապմունքները իրենց բազմազանությամբ և միօրինակությամբ ապահովում են երեխայի ամբողջական պատկերացումներն ու բազմազան կապերը՝ փարբեր օբյեկտների և երևույթների միջև»:

Լալա Սմբատյան «Նախաշավիղ» 2015թ.

ԳԼՈՒԽ 2. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2.1 Ինտեգրված պարապմունք:

Հետազոտական աշխատանքի նպատակը, խնդիրները, ընթացքը:

Առարկա	Խումբ	Թեմա	Տևողություն
Ինտեգրված պարապմունք՝ մաթեմատիկա և ապլիկացիա	Միջին	Երկրաչափական պատկերների իմացության ամրապնդում	25 րոպե
Պարապմունքի նպատակը	<ul style="list-style-type: none"> • Ամրապնդել երկրաչափական պատկերները տարբերելու և անվանելու կարողությունը: • Նշել յուրաքանչյուրի առանձնահատկությունները: • Նկատել և նշել «բարձր» և «ցածր» առարկաները: • Ամրապնդել սոսինձով կոկիկ աշխատելու կարողությունը: • Զարգացնել ուշադրությունը, հանգիստ և կենտրոնացված աշխատելու ունակությունը: 		
Անհրաժեշտ պարագաներ	Երկրաչափական պատկերներով բարձր և ցածր ծառեր, կտրտված երկրաչափական պատկերներ՝ երեխաների թվաքանակով, սոսինձ, «կախարդական» տոփ:		
Մեթոդներ	«Մտազրոհ» խաղային, մեծ խմբով:		

Ընթացքը	
Խթանման փուլ	<p>Հարց-առաջդրանքներ՝ հանելուկի օգնությամբ կռահել «կախարդական» տուփի պարունակությունը:</p> <p>Հարցեր երեխաներին՝</p> <p>-Երեխաներ սեղանի վրա գեղեցիկ տուփ է դրված: Ինչպե՞ս իմանանք ի՞նչ կա տուփի մեջ:</p> <p>-Բացելով:</p> <p>-Այո, իմանալու համար պետք է տուփը բացել: Բայց նախքան բացելը ես կառաջարկեմ հանելուկներ և դուք կռահելով պատասխանները կիմանաք, թե ի՞նչ կա տուփի մեջ:</p> <p>Առաջարկել հանելուկներ, կռահելով հանելուկների պատասխանները, պատմել տուփիկում եղած երկրաչափական պատկերների մասին և նշել նրանց առանձնահատկությունները:</p>
Իմաստի ընկալման փուլ	<p>Խաղային իրավիճակ:</p> <p>Շատ ճիշտ պատասխանեցիք հարցերին, իսկ հիմա ես ձեզ կպատմեմ չարածճի Գնդիկ-Բոքոնիկի մասին հեքիաթ:</p> <p>Կար-չկար մի Գնդիկ-Բոքոնիկ կար: Նա այնքան շատ էր ուզում իմանալ ամեն ինչ, որ մի օր տանից փախավ:</p> <p>Գլորվեց-գլորվեց, բայց ճանապարհը չէր կարողանում տեսնել:</p> <p>-Ինչպե՞ս օգնենք նրան, որ տեսնի: Ինչո՞վ են տեսնում:</p> <p>-Աչքերով:</p> <p>-Ճի՛շտ է, ամրացնենք երկու շրջանները և Գնդիկ-Բոքոնիկը կունենա աչքեր:</p>

	<p>Գնդիկ-Բոքոնիկը ուրախ-ուրախ շարունակում է ճանապարհը: Ճանապարհը անցնում էր ծառերի պուրակով, որտեղ շատ գեղեցիկ էր: Եկեք տերևներով զարդարենք ծառերը, յուրաքանչյուրը իր երկրաչափական պատկերներով:</p> <p>Գնդիկ-Բոքոնիկը շարունակելով ճանապարհը նկատեց գեղեցիկ ծաղիկները, ցանկացավ հոտ քաշել, բայց չկարողացավ:</p> <p>-Երեխաներ հիմա ի՞նչ ամրացնենք, որ օգնենք Գնդիկ-Բոքոնիկին:</p> <p>-Քիթը:</p> <p>-Իհարկե քիթը:</p> <p>Երեխաների օգնությամբ փակցնել «քիթը» (փոքր քառակուսի):</p> <p>Շատ ուրախ շարունակելով ճանապարհը Գնդիկ-Բոքոնիկը ցանկացավ բարձրաձայն երգել, բայց չկարողացավ:</p> <p>-Երեխանե՛ր, ի՞նչը ամրացնենք:</p> <p>-Բերանը:</p> <p>-Իհարկե բերանը (ամրացնում ենք եռանկյունին):</p> <p>-Երեխաներ ինչպե՛ս մենք օգնեցինք Գնդիկ-Բոքոնիկին:</p> <p>-Փակցրեցինք աչքերը, քիթը, բերանը:</p>
Ֆիզկուլտդպար	<p>Երեխաները կատարում են դաստիարակի առաջարկած շարժումները:</p> <p>Մենք աշխարհը տեսնում ենք աչքերով-երեխաները ցույց են տալիս աչքերը:</p> <p>Լսում ենք միմյանց ականջներով- երեխաները ցույց են տալիս ականջները:</p>

	<p>Ծափ ենք տալիս երկու ձեռքերով-երեխաները ծափ են տալիս ձեռքերով:</p> <p>Քայլում, թռչկոտում ենք զույգ ոտքերով- երեխաները քայլում են ու թռչկոտում:</p> <p>Ուրախ երգում ենք բերանով-երեխաները երգում են:</p>
Ապլիկացիա	<p>Երեխաներ մենք օգնեցինք Գնդիկ-Բոքոնիկին, որ նա տեսնի,լսի և կարողանա խոսել:</p> <p>Այժմ եկեք մենք էլ օգնենք մնացած Գնդիկ-Բոքոնիկներին, փակցնելով աչքեր, բերան և քիթ:</p>
Կշռադաստման փուլ	<p>Հարցեր բոլորին</p> <ul style="list-style-type: none"> • Ի՞նչ աշխատանք կատարեցինք այսօր, հերթականությամբ քննարկել քայլերը: • Ի՞նչը ամենից շատ դուր եկավ կատարած աշխատանքներից: • Ի՞նչն էր ձեզ համար դժվար:

Կից ներկայացվում են ինտեգրված պարապմունքի նկարները.







2.2 Հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծություն

Այս պարապմունքը զարգացրեց երեխաների համեմատելու, տարբերելու, ընդհանրացնելու կարողությունները, ամրաանդվեց երկրաչափական պատկերների մասին ունեցած գիտելիքները:

Պարապմունքի ընթացքում երեխաները ազատ և անկաշկանդ պատասխանեցին դաստիարակի հարցերին, խմբում տիրում էր կառավարելի աշխուժություն:

Դաստիարակի խոսքը հստակ էր և հասկանալի երեխաների համար, ակտիվ էին բոլոր երեխաները:

Օգտագործված խաղային մեթոդները համապատասխանում էին երեխաների հնարավորություններին, հետաքրքիր էին, օգնեցին բացահայտելու նրանց անհատական առանձնահատկությունները, շրջապատի հետ հաղորդակցման հմտությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հետազոտության ընթացքում փորձարարական արդյունքների և իրականացրած ուսումնասիրությունների հիման վրա հանգել եմ հետևյալ եզրակացությանը՝ երեխաների մեջ տարրական մաթեմատիկական հասկացություններ մշակելու և զարգացնելու ամենաարդյունավետ ձևը դա խաղն է՝ ինտեգրված պարապմունքի հիման վրա:

Ինտեգրված խաղ-պարապմունքում ստեղծված էին այնպիսի իրավիճակներ, որոնք երեխաներին մղում էին փոխօգնության, աշխատանքի արդյունքը համատեղ քննարկելուն, դրական հույզերի առաջացմանն ու զարգացմանը: Կարող ենք փաստել, որ այս ձևով ինտեգրված պարապմունքներին երեխաներն սիրով են աշխատում, հեշտությամբ և հետաքրքրությամբ են յուրացնում ծավալուն նյութը, և այս սովորելու ոճն է բերում ինտեգրված պարապմունքի ընթացքում մեկ խնդիր լուծվում է տարբեր տեսակի գործողությունների ինտեգրմամբ:

Ակնհայտ է, որ այս ինտեգրված պարապմունքները, որտեղ դաստիարակը ուղղակի խաղում է երեխաների հետ և տվյալ պահին կյանքին նայում է երեխայի աչքերով, կօգնի երեխաներին հաղթահարելու մաթեմատիկայի նախնական, տարրական հասկացությունների այբուբենի յուրացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հ.Միտոյան, Լ.Սմբատյան Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան 2005:
2. Ա.Հովհաննիսյան, Ս.Մարության «Պարտեզ» նախադպրոցական կրթական ծրագիր, Երևան 2008:
3. Ինտեգրված երաժշտական պարապմունքները մանկապարտեզում: Ուսումնամեթոդական ձեռնարկ/ Կազմող Կ. Ղազարյան.- Երևան:Մարի հրատարակչություն, 2023.-192 էջ:
4. Լալա Սմբատյան «Նախաշավիղ», ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ 2015թ.-66էջ:
5. Пузанкова Е. Н., Бочкова Н. В. Современная педагогическая интеграция, её характеристики/// Образование и общество. — 2009. — N 1. — С. 9-13.